

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

18 փետրվարի 2020թ.
ք.Երևան

N 11-Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-Ի ՀԱՆՐԱՔՎԵԻ
«ՈՅ» ՔԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄ ԵՎ ՆՐԱ ԼԻԱԶՈՐ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովում 18.02.2020թ. ստացվել է քաղաքացի Ռուբեն Մելիքյանի 18.02.2020թ. գրությունը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների 2020 թվականի ապրիլի 5-ի հանրաքվեի «ՈՅ» քարոզչության կողմ և նրա լիազոր ներկայացուցիչ գրանցելու մասին: Գրությանը կից ներկայացվել է որոշում «2020 թվականի ապրիլի 5-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի «ՈՅ» քարոզչության կողմ ձևավորելու և լիազոր ներկայացուցիչ նշանակելու մասին»՝ ստորագրված թվով 61 Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից, ինչպես նաև որոշումը ստորագրած քաղաքացիների անձը հաստատող փաստաթղթերի պատճենները:

Ուսումնասիրելով ներկայացված գրությունը՝ կից փաստաթղթերով, հիմք ընդունելով «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 17-րդ հոդվածի 8-11-րդ մասերը, ղեկավարվելով «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 17-րդ հոդվածի 12-րդ մասի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Գրանցել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների 2020 թվականի ապրիլի 5-ի հանրաքվեի «ՈՅ» քարոզչության կողմ:
2. Քաղաքացի Ռուբեն Մելիքյանին գրանցել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների 2020 թվականի ապրիլի 5-ի հանրաքվեի «ՈՅ» քարոզչության կողմի լիազոր ներկայացուցիչ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Տ. Մուկուչյան